ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/131

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Կ. Դրամբյանի, Տ. Ջիլավյանի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել՝

1. դադարեցնել թիվ 5 արձանագրության 1-ին կետի՝ հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, հանձնաժողովը որոշեց մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով, 24.12.2020թ որոշումը,

2. դադարեցնել թիվ 5 արձանագրության 2-րդ կետի՝ հաշվի առնելով, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և բավարար գնահատված բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հրավիրել բանակցությունների գնային առաջարկների նվազեցման շուրջ, որը տեղի կունենա 29.12.2020թ ժամը 14:00-ին, 24.12.2020թ որոշումը,

3. «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Մեգիէլ» ՍՊ ընկերության հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.12.2020թ.-ին:

29.12.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 համարի ծածկագիրը:

15.01.2021թ.-ին, 20.01.2021թ.-ին, և 29.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.01.2021թ.-ին:

1. **<u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև Ընկերություն):

Ընկերությունն Ընթացակարգին մասնակցել է 3-րդ չափաբաժնով օքսիգենատոր մեծահասակի համար: Ընթացակարգին մասնակցել է համարժեք ապրանքատեսակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11 դեկտեմբերի 2020թ թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն որոշել է, որ 3-րդ չափաբաժեով «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է համարժեք ապրանք, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, դիմել համապատասխան ծառայությանը, համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

Հաջորդ նիստը հրավիրվել է 17 դեկտեմբերի 2020թ: Թիվ 3-րդ արձանագրության 1-ին կետով հանձնաժողովն արձանագրել է, որ ընդունել ի գիտություն, որ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն /կցվում է արձանագրությանը/, ըստ որի «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspier 8F մեծահասակի օքսիգենատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին: ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և տեղեկացնել մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը (21.12.2020թ ժամը 12:00) շտկել անհամապատասխանությունը:

21.12.2020թ Ընկերության կողմից ներկայացվել է գրավոր հիմնավորումներ ապրանքի համարժեքության վերաբերյալ:

Թեև 17.12.2020թ որոշմամբ հանձնաժողովը նիստը կասեցրել էր մեկ աշխատանքային օրով և հաջորդ նիստը նշանակվել էր 21.12.2020թ ժամը 12:00-ին, սակայն հանձնաժողովը խախտելով իր կայացրած որոշումը և 526-Ն որոշմամբ սահմանված ժամկետները նիստը կայացել է 24 դեկտեմբերի 2020 թվականի ժամը 16:00-ին:

24 դեկտեմբերի 2020 թվականի ժամը 16:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշել է հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները,

հանձնաժողովը որոշեց մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

Նույն արձանագրության 2-րդ կետով հանձնաժողովը որոշել է, հաշվի առնելով, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և բավարար գնահատված բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հրավիրել բանակցությունների գնային առաջարկների նվազեցման շուրջ, որը տեղի կունենա 29.12.2020թ ժամը 14:00-ին: Բանակցությունների վարման կարգը և ժամկետները կսահմանվեն նիստին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. ...

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Օրենքը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշումը (հետայսու՝ նաև Կարգ) չի նախատեսում այնպիսի իրավական կարգավորում, որ պատվիրատուն իր աշխատակցին կամ ենթակայության տակ գտնվող ստորաբաժանմանը դիմի եզրակացություն տալու նպատակով:

Այսինքն գնահատող հանձնաժողովը կատարել է գործողություն, որով լիազորված չէ օրենքով:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ:

Նույն կարգավորումը սահմանված է նաև Կարգով:

Այնուամենայնիվ, ուսումնասիրելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանի գրությունը, այն եզրակացություն անվանել չենք կարող, քանի որ այն ցանկությունների, ենթադրությունների

և նպատակահարմարությունից ելնելով ներկայացված սուբյեկտիվ կարծիք է, առանց գիտական հիմնավորումների:

Այսպես,

Համաձայն Օհանջանյանի կարծիքի գտնում են, որ Horizon AF Plus օքսիգենատորի փոխարինումը Inspire 8 օքսիգենատորով բժշկական տեսանկյունից նպատակահարմար չէ: Միևնույն ժամանակ 25 տարվա գործունեության ընթացքում հանդիպած դեպքերին է հղում անում և կարծիք է հայտնում, որ տոկա չէ 8լ թողունակություն ապահովող օքսիգենատորի պահանջ:

ՈՒշագրավ հանգամանք է, ինչու է կարծիք հայտնողը համեմատություն անցկացնում հենց Horizon AF Plus օքսիգենատորի հետ, կարծես թե ցուցումից ելնելով է պերֆուզոլոգը համեմատություն անցկացնում այդ երկու ապրանքանիշերի միջև:

Մեկ այլ ընկերություն մրցույթին ներկայացել է Horizon AF Plus ապրանքանիշով, սակայն ավելի բարձր գնային առաջարկով, մոտ 15.000 ՀՀ դրամի տիրույթում:

Կարծիք հայտնողը, երբ գնահատական է տալիս 25 տարվա կտրվածքով, հավանաբար պետք է մտաբերեր, որ շուրջ 4 տարի է Պատվիրատուն ձեռք է բերում հենց Sorin Inspire ընտանիքի օքսիգենատոր, զորօրինակ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/81 ծածկագրով ընթացակարգում հաղթող է ճանաչվել Ընկերությունը և 19.11.2020թ կնքելով մատակարարման պայմանագիր մատակարարել է Sorin Inspire ընտանիքի օքսիգենատորներ:

Հավելենք, որ Պատվիրատուն շուրջ մեկ տասնամյակ ձեռք է բերում Sorin ապրանքանիշի արտադրանք:

Դիտարկենք, որ Պատվիրատուն օրենքով և իրավական այլ ակտերով լիազորված էր եզրակացություն պահանջելու ինչ-որ ապրանքատեսակի հատկանիշների վերաբերյալ, ապա եզրակացություն տրամադրելու ակնկալիքով անաչառ կլիներ, եթե եզրակացություն հայցեր անկախ փորձագետից կամ օրինակ դիմեր ՀՀ Առողջապահության նախարարությանը կամ մեկ այլ գիտական հաստատության: Այլապես ստացվում է, որ իր ենթակայության տակ գտնվող անձը հայտնում է կարծիք, այն էլ ոչ հիմնավոր և հակասական, պարզապես նպատակահարմարությունից ելնելով, միգուցե նշեր ում համար նպատակահարմար:

Եթե Պատվիրատուն վերը նշված երկու ապրանքատեսակները դիտարկում է համեմատության մեջ է և անհիմն նախապատվությունը տալիս տեխնիկական բնութագրում

նշված ապրանքանիշին, ապա օրենսդրի կողմից սահմանված համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը դառնում է իմաստազուրկ:

Պատվիրատուն գնահատելով հայտերը պետք է առաջնորդվեր գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ նպատակով, այն որ Ընկերության առաջարկած ապրանքատեսակը որակական հատկանիշներով առաջատար է միջազգային մակարդակով անվիճելի է և գնային առաջարկն էլ ավելի ցածր, քան Horizon AF Plus ապրանքատեսակի:

Պատվիրատուն մերժելով Ընկերության հայտը չի հիմնավորել օրենքի որ հոդվածով է ղեկավարվել, ինչն էլ Պատվիրատուի որոշումը զուրկ է որոշակիությունից և իրավական հիմնավորվածությունից:

Բացի այդ, մերժելով Ընկերության հայտը հիմքում դիտարկել է մասնագիտական եզրակացությունները, սակայն Ընկերությանը հասանելի է եղել մեկ եզրակացություն, որի մասին վերը հիշատակել ենք: Եթե առկա են այլ եզրակացություններ, ապա ինչու Ընկերությանը հասանելի չեն դարձվել դրանք, թեև արդեն ունենք որոշակի փորձ Պատվիրատուի մոտեցումների առումով, կպատճառաբանի, որ եզրակացության հոգնակի տարբերակը պարզապես վրիպակ է եղել:

Գնահատող հանձնաժողովը կարծես հակված է գործելու նպատակահարմարությունից ելնելով, մինչդեռ պարտավոր է ղեկավարվել Օրենքով և Կարգով իրեն տրված լիազորություններով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրությամբ պետք է արձանագրեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի այն նորմը և/կամ 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի այն կետը, որով իրավասու էր ղեկավարվել Ընկերության հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս:»:

22.01.2021թ.-ի ներկայացրած գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

««22.12.2020թ հրաման N 1156/1 մասով.

պատվիրատուն նշված հրամանը արձակել է ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման (հետայսու՝ նաեւ Կարգ) 7, 20 եւ 21-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածով:

N 1156/1 հրամանով բժշկական կենտրոնի տնօրենը հրամայել է ««Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 2020 թվականի կարիքների համար գնումների գործընթացների կազմակերպման մասին 22.12.2020 թիվ հրամանում կատարել հետեւյալ փոփոխությունը եւ լրացումը....»:

ՈՒշագրավ է, որ հրամանի փոփոխությունը վերաբերում է «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 2020 թվականի կարիքների համար գնումների գործընթացների կազմակերպման մասին 22.12.2020 թիվ հրամանին: Մինչդեռ, հրամանը պետք է վերաբերեր հստակ նշված ծածկագրով գնման ընթացակարգի, ինչպես նաեւ նշվել է 22.12.2020թ թիվ հրաման, սակայն նշված չէ թե որ հրամանում պետք է այնուամենայնիվ կատարվեր փոփոխություն եւ լրացում:

Անդրադառնանք վկայակոչված իրավական ակտերին.

- *«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 07.04.2018 թվականին:*
- *Կարգի 7-րդ կետի համաձայն Պատվիրատուի ղեկավարը՝*

1) սահմանում է

ա. գնումները համակարգող,

բ. պատասխանատու ստորաբաժանում,

գ. գնահատող հանձնաժողով բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի.

2) բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի՝

ա. կնքում է պայմանագիրը,

բ. հաստատում է գնման ընթացակարգի արձանագրությունը:

- *Կարգի 20-րդ կետի համաձայն գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝*

1) պատասխանատու ստորաբաժանում, եւ

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: Հայաստանի հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար կատարվող գնումների դեպքում սույն ենթակետով նախատեսված ժամանակացույցը հաստատվում է գնման պահանջի ծագման օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող գնումների դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատվելուց հետո ձեռնարկվում են միջոցներ մինչեւ բյուջետային տարին սկսվելը օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա գնման գործընթացները կազմակերպելու եւ պայմանագրերը կնքելու ուղղությամբ: Եթե շինարարական ծրագրի գնման համար պահանջվող ամբողջական միջոցները նախատեսված են հաստատված

միջնաժամկետ ծախսային ծրագրում, ապա գնման գործընթացը կազմակերպվում է օրենքի սույն ենթակետում նշված կարգավորման համաձայն նախագծային փաստաթղթերով նախատեսված ամբողջական արժեքով:

➢ *Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝*

1) կազմում եւ հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաեւ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի եւ արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում.

բ. (ենթակետն ուժը կորցրել է 10.10.19 N 1422-Ն)

գ. (ենթակետն ուժը կորցրել է 10.10.19 N 1422-Ն)

դ. մեկ անձից գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, ցանվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը բացառությամբ էլեկտրոնային համակարգի միջոցով մեկ անձից գնումների կատարման դեպքերի: Ընդ որում, գնումները սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված հիմքերով, էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով չիրականացնելու դեպքում, ներկայացվող անձանց (հնարավոր մասնակից) թիվը չի կարող պակաս լինել երեքից,

ե. գնման առարկայի պահանջվող ծավալը եւ մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,

զ. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում վերջնաժամկետը,

է. կանխավճարի հատկացման հնարավորությունը եւ առավելագույն չափը,

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձեւով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների եւ ծառայությունների

դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացացային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների եւ պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում,

թ) խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը: Ընդ որում, շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում գնային պայմանի համար սահմանվող չափանիշը չի կարող պակաս լինել քսան և ավել երեսուն միավորից.

2) եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝

ա. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունևեյի, բացառությամբ շինարարական ծրագրերի, ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եւ տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաեւ ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում,

բ. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, եւ առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը.

3) գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը:

Կարգից մեջբերված կետերի նպատակն ուղված է հավաստելու, որ 22.12.2020 թվականի N 1156/1 հրամանը չի համապատասխանում ներկայացված իրավական ակտերի պահանջներին:

Բժշկական կենտրոնի տնօրենը, թեեւ ղեկավարվել է Կարգի ներկայացված կետերով, սակայն ինչպես նկատեցինք այդ կետերն ունեն մի քանի ենթակետեր, ուստի հրամանից հստակ չէ, թե որ ենթակետով է ղեկավարվել հրաման արձակողը:

Բացի այդ ուսումնասիրելով վկայակոչված կետերը, չենք կարող արձանագրել, որ բժշկական կենտրոնի ղեկավարը լիազորված է եղել գնահատման փուլում գտնվող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմը փոփոխելու իրավասությամբ:

18.01.2021թ թիվ 35/1 Հրամանի մասով.

Բժշկական կենտրոնի տնօրենը, սույն հրամանն արձակելիս ղեկավարվել է Կարգի 7, 20, 21-րդ կետերի եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով:

Հրամայել է «...22.12.2020թ թիվ 1156/1 հրամանում կատարել հետեւյալ փոփոխությունը եւ լրացումը. «22.12.2020թ թիվ» բառերը փոխարինել «26.11.2020թ թիվ 1038/1» բառերով:...»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝

1. Նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝

2) բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով.:

Նորմի ուսումնասիրությունից պարզ է, որ հրաման արձակողը վկայակոչված նորմով ղեկավարվելով, չէր կարող լրացում կատարել 22.12.2020թ թիվ 1156/1 հրամանում:

Այսպիսով ներկայացված երկու հրամանների ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ բժշկական կենտրոնի տնօրենի արձակած հրամաններն օրինական չեն և Կարգի կետերի վերլուծությունից արձանագրում ենք, որ պատվիրատուի տնօրենը իրավաու չի եղել ընթացակարգի գնահատման հանձնաժողովի կազմի փոփոխություն կատարել գնահատման փուլում:

17.12.2020թ եզրակացության մասով.

Ա. Օհանջանյանը, ով 22.12.2020թ հրամանով դարձել է գնահատող հանձնաժողովի նախագահ հայտնում է.

«....Հարկ է նշել, որ նշված պարամետրերը ուղղակիորեն կապ ունեն հիվանդի քաշային կատեգորիայի հետ: Կենտրոնն իր 25 տարվա գործունեության ընթացքում ունեցել է ընդամենը 2 դեպք, երբ հիվանդի քաշը եղել է 160-165կգ տիրույթում եւ նշված կատեգորիայի համար ևս համապատասխանում է Horizon AF Plus օքսիգենատորը, ուստի առկա չէ 8 լ թողունակություն ապահովող օքսիգենատորի պահանջ:»

Օհանջանյանի այս միտքն անուղղակիորեն հակասության մեջ է օբյեկտիվության հետ, եթե համեմատություն է անցկացնում քաշային կատեգորիայի հետ եւ հայտնում, որ ուղղակիորեն կապ ունի դրա հետ եւ ընդգծում, որ 25 տարվա ընթացքում 2 դեպք է եղել 160-165կգ տիրույթում, ապա 7լ եւ 8լ թողունակության միջեւ համեմատություն չէր ներկայացվի, կարող ենք հետեւություն անել, որ 7լ թողունակությամբ օքսիգենատորը չի բավարարի այն նպատակի համար, եթե հիվանդը լինի Օհանջանյանի նշած քաշային կատեգորիայում, որը չի բացառվում: Լիահույս լինենք, որ չի ստորադասվի անձի առողջությունը եւ կյանքը նպատակահարմարությանը:

Մասնագիտական կարծիքի 1-ին եւ 2-րդ կետերով վկայակոչված չափորոշիչները չեն եղել տեխնիկական բնութագրով հետեւաբար գնահատող հանձնաժողով հանելյալ պահանջ ներկայցնելու իրավասություն չունի:

Այն, որ տեխնիկական բնութագրով չնախատեսված չափորոշիչի վերաբերյալ կարծիք է արձանագրված եզրակացությամբ, անվիճելի է, որի մասին 20.01.2021թ № 08-48 գրության 4-րդ կետով Պատվիրատուն հիմնավորում է, մեջբերվում է «Ընդ որում մասնագիտական եզրակացությամբ համեմատումն իրականացվել է ընդհանուր, ոչ միայն հրակերով նախատեսված պարամետրերի մասով»:

Այսպիսով Պատվիրատուն հավաստում է, որ հրավերի տեխնիկական բնութագրով չնախատեսված չափորոշիչների վերաբերյալ պարզաբանում է պահանջել Մասնակցից:

Արդյոք ընթացակարգը գնահատող հանձնաժողովը իրավասու է հրավերով չնախատեսված չափորոշիչների վերաբերյալ Մասնակցից հստակեցում պահանջել:

Պատվիրատուի 20.01.2021 եւ 11.01.2021 թվականների գրությունների, տեխնիկական բնութագրի մասով.

20.01.2021թ թիվ 08-48 գրությամբ հայտնել են, որ գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտի ամբողջական գնահատումն իրականացրել է սահմանված ժամկետում եւ հրավերի պահանջներին համապատասխան:

Մինչդեռ, նույն գրության 4-րդ կետով հայտնում է, որ Մասնակցից հստակեցում է պահանջել նաեւ ոչ միայն հրվերով նախատեսված պարամետրերի մասով:

Պատվիրատուն պետք է Մասնակցի հայտը գնահատեր համարժեքության տեսանկյունից, եւ ոչ թե տեխնիկական բնութագրով ներկայացրած բոլոր չափորոշիչների բացարձակ համընկման սկզբունքով, քանի որ համարժեք ապրանքով է մասնակցել գնման ընթացակարգին, որը ենթադրում է, որ կարող է հնարավոր անհամապատասխանություն լինի հաշվի առնելով տոկոսային հարաբերակցությունը, էական չափորոշիչների գերակշիռ առկայությունը, այլապես օրենսդրի կողմից սահմանած համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը դառնում է վերացական:

Այս դեպքում ըստ էության Պատվիրատուի մասնագիտական կարծիքով նպատակահարմար չէր առաջարկվող ապրանքը 8լ թողունակությամբ:

Օբյեկտիվ կլիներ, եթե այդ մասնագիտական կարծիքով դիտարկվեր առաջարկված ապրանքի եւ հրավերի տեխնիկական բնութագրի կարևորագույն չափորոշիչը, այն է նոմինալ բացթողունակությունը, որը եւ հրավերի տեխնիկական բնութագրով, եւ առաջարկվող ապրանքում նույնն է արյան հոսքի 4լ/րոպեում: Նոմինալ բացթողունակությունը աշխատանքային գլխավոր պայմանն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Արդյոք անհնար է եղել ներկայացնել տեխնիկական բնութագիր առանց հղում անելու մոդելին կամ ֆիրմային անվանմանը:

Վիճարկվող ընթացակարգով Պատվիրատուն առաջնայնություն է տվել տեխնիկական բնութագրով նշված ֆիրմային անվանմանը, քանի որ համեմատությունը այդ ապրանքատեսակի հետ է անցկացվել, մինչդեռ չափորոշիչների գնահատման համարժեքությունը պետք է դիտարկվի կարիքին համապատասխան եւ մատակարարվող ապրանքով նպատակային, անհրաժեշտ արդյունքն ապահովելու առաջնայնությունից ելնելով:

Այսպիսով Պատվիրատուն ներկայացվող ապրանքի չափորոշիչների համապատասխանությունը պետք է գնահատեր համարժեքության տիրույթում եւ ոչ թե բացարձակ նույնականացումով:

Ընկերությունը 22.01.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«ԳԲՔԱ-ԼՕ-2020/31 ծածկագրով քննվող բաղոքի առնչությամբ պատվիրատուի 26.01.2021թ № 08-57 գրության կապակցությամբ հայտնում ենք.

Պատվիրատուն, եթե գնահատում է, որ գործել է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում եւ թույլ չի տվել օրենսդրության խախտում, ապա պետք է վկայակոչի լիազորող նորմը, կարգավորումը, սակայն բողոքի քննության ընթացքում այդ նորմը չվկայակոչվեց, այսինքն չհիմնավորվեց, որ տնօրենն ունեցել է այն լիազորությունը, որը նկատի ունի պատվիրատուն:

Ինչ վերաբերում է պատվիրատուի դիրքորոշմանը հանձնաժողովի փոփոխության հետ կապված հրամաններին եւ հանձնաժողովի առնվազն երեք անդամի առկայությանը, ապա գտնում ենք, որ պատվիրատուն անուղղակիորեն ընդունում է, որ հանձնաժողովի նախագահ Օհանջանյանը նշանակվել է օրենքի խախտմամբ:

Պատվիրատուն կարծիք է հայտնում, որ բողոքաբերը սխալ է մեկնաբանել Օհանջանյանի բառերը, սակայն բողոքաբերը ի ցույց է դրել այն ինչ իր «եզրակացությամբ» հայտնել է Օհանջանյանը: Հավելենք նաեւ, որ եզրակացությունները չեն հիմնավորվում նպատակահարմարությունից ելնելով, այլ դրանք պետք է ունենան գիտական հենք:

Օքսիգենատորների թողունակության մանրամասներին սույնով չենք անդրադառնում, քանի որ դրանց վերաբերյալ դիտարկումները հայտնել ենք բողոքի քննության ընթացքում:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի հավելված 1.1-ով պատվիրատուն պահանջում է բաց մրցույթի շրջանակում ըստ չափաբաժինների ստորեւ ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ուստի պատվիրատուի այն պահանջը, որ տեխնիկական բնութագրում շտկում կատարվի հակասում է իր հրապարակած հավելված 1.1-ին:»:

2. **<u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 29.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19814-2020 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, 11.01.2021թ.-ին թիվ 08-06 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 28.12.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ- 2020/31 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

Մասնակցի այն պնդումը, որ գնահատող հանձնաժողովը 3-րդ նիստով հաջորդ նիստի օր է սահմանել 21.12.20թ. սակայն նիստը կայացրել է միայն 24.12.20թ-ին իրականությանը չի համապատասխանում: 21.12.2020թ-ին նույնպես կայացել է գնահատող հանձնաժողովի նիստ: Նշված նիստին, ելնելով մասնակցի տեխնիկական բնութագրերի նոր առաջարկներից, կրկին առաջացել է մասնագիտական կարծիք ստանալու անհրաժեշտություն, որի պատճառով նիստը կասեցվել է: Այնուհետև կատարվել է հանձնաժողովի կազմի փոփոխություն (ավելացում): Գնահատող հանձնաժողովը իրավասու է ընդունել որոշումներ՝ նիստը կասեցնելու, այլ արտահերթ նիստ նշանակելու, կամ որևէ մարմնի դիմելու հետ կապված, և այդ ամենը չի հակասում գործող օրենսդրությանը: Ի վերջո մասնակցի հայտը գնահատվել է գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումով, ընդ որում Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և որևէ ընթացակարգային ժամկետների խախտում թույլ չի տրվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 13-րդ հոդվածի՝

1-ին կետի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:»,

2-րդ կետի համաձայն՝

«Գնման առարկայի բնութագրերը

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: >>

5-րդ կետի համաձայն.

«Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»

Նշված հոդվածով հստակ սահմանված է այն, որ «կամ համարժեք» բառակապակցությունը կիրառելի է որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումներին, այլ ոչ թե քանակական, ծավալային, կամ այլ տեխնիկական բնութագրիչ պարամետրերին: Մասնակիցը իրավունք չունի Պատվիրատուից պահանջել հրավերով նախատեսված տեխնիկական ցուցանիշներից տարբերվող այլ ցուցանիշներով ապրանքը գնահատել և ընդունել որպես համարժեք: Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանում է Պատվիրատուն, առաջարկերի համարժեքությունը նույնպես գնահատում է Պատվիրատուն, գնումը նույնպես կատարում է Պատվիրատուն՝ իր կարիքին համապատասխան: Տվյալ դեպքում անընդունելի է տվյալ ապրանքի փաստացի կիրառումն ապահովող մասնագիտական կառույցի (վիրահատական ծառայության) եզրակացությունները հաշվի չառնել և առաջնորդվել ապրանք վաճառող ընկերության անհիմն հայտարարությամբ:

Մասնակիցը հրավերի թիվ 1 հավելվածով պարտավորվում է ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համաձայն հավելված 1.1: Ամբողջական բառը չի ենթադրում հրավերով նախատեսվածից տարբերվող, այլ նշանակում է ի հավելումն հրավերով նախատեսված ցուցանիշների, նաև այլ անհրաժեշտ տվյալներ, որոնք ներառված չեն եղել պայմանագրի նախագծում:

Հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերում հստակ նկարագրված են ցուցանիշներ, պարամետրեր, որոնց

համապատասխան Պատվիրատուն կարիք ունի գնել ապրանք: Մասնակիցն իր առաջարկներով ներկայացրել է ապրանքներ, որոնք իրենց մի քանի էական պարամետրերով (նշված են նիստերի արձանագրություններում) չեն համապատասխանում հրավերով նախատեսվածին: Նշված պարամետրերի տարբերությունների ընդունելի չլինելու օբյեկտիվ հիմնավորումները ներկայացված են Կենտրոնի վիրահատական ծառայության եզրակացություններում: Եթե մասնակցի առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա են անընդունելի անհամապատասխանություններ հրավերով նախատեսվածի համեմատ, ապա Օրենքի պահանջների համաձայն Մասնակցի հայտը ենթակա է մերժման:»:

Ի լրումն 11.01.2021թ.-ի թիվ 08-06 գրությանը, 20.01.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«26.11.2020թ. Պատվիրատուի ղեկավարի թիվ 1038/1 հրամանով ստեղծվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով բաց մրցույթի (այսուհետև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողով, (կցվում է):

Ընթացակարգի հրավերը և հայտարարությունը հրապարակվել են գնումների պաշտոնական տեղեկագրում 26.11.2020թ-ին (հրավերում ներառված ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացված են նախորդ գրությամբ՝ պայմանագրի նախագծի հավելված 1-ի տեսքով): Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն (հայտի պատճենը կցվում է):

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 11.12.2020թ-ին (արձանագրության պատճենը ներկայացված է նախորդ գրությամբ), որին հանձնաժողովը արձանագրել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանություններ հրավերի պահանջներին: Մինչ մասնակցից Օրենքով սահմանված կարգով շտկում պահանջելը, հանձնաժողովը դիմել է կենտրոնի համապատասխան ծառայություն՝ մասնագիտական կարծիք ստանալու համար:

Հաջորդ նիստը տեղի է ունեցել 17.12.2020թ-ին, որին հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մինչև 21.12.2020թ. և մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ առկա անհամապատասխանությունները շտկելու Օրենքով սահմանված ժամկետը: Նիստի արձանագրությանը կից ընկերությանը տրամադրվել է նաև մասնագիտական եզրակացության պատճենը, քանի որ այդ եզրակացությամբ նկարագրված են բոլոր այն անհրաժեշտ պարամետրերի տարբերությունները, ինչը դեր է խաղում առաջարկված ապրանքի համարժեքության գնահատման համար և Կարգի 41-րդ կետի համաձայն

Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Ընդ որում մասնագիտական եզրակացությամբ համեմատումն իրականացվել է ընդհանուր, ոչ միայն հրավերով նախատեսված պարամետրերի մասով: Ներկայացվել է նաև տվյալ, համաձայն որի Ընկերության առաջարկած բնութագրերում նշված ռեզերվուարի նյութը համապատասխանում է հրավերի պահանջներին, սակայն չի համապատասխանում ապրանքի իրական նկարագրին: Սահմանված ժամկետում՝ 21.12.2020թ., ընկերությունը ներկայացրել է գրություն, որով չի շտկել անհամապատասխանությունները, սակայն ընդունել է ռեզերվուարի նյութի մասով իր նշումը որպես տեխնիկական վրիպակ, ուղղել այն, որի արդյունքում տվյալ ցուցանիշով մասնակցի առաջարկը նույնպես դարձել է հրավերի պահանջներին չհամապատասխանող: (արձանագրության և եզրակացության պատճենները ներկայացված են նախորդ գրությամբ, Մասնակցի պատասխան գրությունը կցվում է): Բացի այդ, ընկերությունը նշված գրությամբ առաջարկել է նաև այլ մոդելների օքսիգենատորներ՝ Inspire 6F և Inspire 6, սակայն դրանց բնութագրեր չի ներկայացրել: Մասնակիցը նաև նշել է, որ Inspire 6 օքսիգենատորը տարներ շարունակ կիրառվել է բժշկական կենտրոնում: Միաժամանակ Մասնակիցը գրությամբ խնդրել է որ իր առաջարկները ևս մեկ անգամ ներկայացվեն կենտրոնի համապատասխան ծառայության մասնագետներին: 21.12.2020թ. նիստին, հանձնաժողովն ուսումնասիրելով Մասնակցի գրությունը, նիստը կրկին կասեցրել է և տվյալները տրամադրել կենտրոնի համապատասխան ծառայությանը՝ կարծիք ստանալու: (արձանագրության պատճենը ներկայացված է նախորդ գրությամբ):

Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 15-րդ կետի համաձայն «Գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը: Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):»

Ելնելով ստեղծված իրավիճակից, Պատվիրատուի ղեկավարի 22.12.2020թ. N1156/1 հրամանով կատարվել է հանձնաժողովի կազմի փոփոխություն և որպես հանձնաժողովի

նախագահ ներառվել կենտրոնի պատասխանատու պերֆուզիոլոգ Մ. Օհանջնայանը, ով հանդիսանում է տվյալ ապրանքի կիրառման ուղղակի պատասխանատուն և ունի Մասնակցի առաջարկը գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն: Նշված հրամանում տեղ է գտել տեխնիկական վրիպակ, որը ուղղվել է Պատվիրատուի ղեկավարի 18.01.2021թ. N35/1 հրամանով (կցվում է):

Կենտրոնի համապատասխան ծառայության կողմից գնահատող հանձնաժողովին Մասնակցի կողմից ներկայացված գրության վերաբերյալ եզրակացությունը տրամադրվել է 24.12.2020թ-ին, որը հաստատվել է նաև ծառայության ղեկավար՝ Գ Հեբոյանի կողմից:

Նույն օրը, համաձայն հանձնաժողովի 4-րդ նիստով նշանակված ժամանակացույցի, ժամը 16:00-ին կայացել է հաջորդ նիստը (արձանագրության պատճենը ներկայացված է նախորդ գրությամբ): Նիստին գնահատող հանձնաժողովը իրականացրել է Մասնակցի հայտի գնահատում: Հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժվել:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջների համաձայն «հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտի ամբողջական գնահատումն իրականացրել է սահմանված ժամկետում և Հրավերի պահանջներին համապատասխան:

Ամփոփելով վերը նշվածները գտնում ենք, որ հանձնաժողովը գործել է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն և Մասնակցի բողոքը հիմնավոր չէ:»:

26.01.2021թ.-ի թիվ 08-57 ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ԳԲՔԱ-ԼՕ-2020/31 ծածկագրով բողոքի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 22.01.2021թ. ներկայացրած լրացուցիչ գրության, հայտնում ենք հետևյալը.

1-ին և 2-րդ կետերի մասով գտնում ենք, որ Պատվիրատուն գործել է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և թույլ չի տվել Օրենսդրության խախտում:

ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն, գնահատող հանձնաժողովը պետք է ունենա առնվազն երեք անդամ, որոշումը համարվում է ընդունված ձայների մեծամասնությամբ, ուստի տվյալ Ընթացակարգի շրջանակներում, ինչպես էլ

մեկնաբանվեն հանձնաժողովի փոփոխության հետ կապված հրամանները, հանձնաժողովի նիստերը իրավազոր են և նույնիսկ ձայների 3 կողմ քվեարկության պայմանում որոշումները համարվում են ընդունված:

3-րդ կետի մասով հայտնում ենք, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն կատարել է Ա. Օհանջանյանի բառերի սխալ մեկնաբանություն: Ա. Օհանջանյանի հետևյալ բառերը «Կենտրոնը իր 25 տարվա գործունեության ընթացքում ունեցել է ընդամենը 2 դեպք, երբ հիվանդի քաշը եղել է 160-165կգ տիրույթում, և նշված կատեգորիայի համար ևս համապատասխանում է Horizon AF Plus օքսիգենատորը» հստակ արտահայտում են այն, որ հրավերով նախատեսված օքսիգենատորը բավարարում է 160-165կգ քաշային կատեգորիային:

Հրավերով նախատեսված բոլոր ցուցանիշներն էլ կարևոր են, որոնք արտահայտում են ապրանքի ձեռբերման համապատասխանությունը Պատվիրատուի այն կարիքին, որի համար իրականացվում է գնումը:

Հայտնում ենք նաև այն, որ բժշկական կենտրոնը կիրառում է մանկական և մեծահասակի օքսիգենատորներ, որոնք ունեն արյան հոսքի առավելագույն թողունակության հետևյալ ցուցանիշները՝ 1500մլ / րոպե, 2000 մլ / րոպե, 2500 մլ / րոպե, 3500 մլ / րոպե, 5000 մլ / րոպե, 6000 մլ / րոպե, 7000 մլ / րոպե: Եթե բժշկական նկատառումներից ելնելով դրանց կարիքը չլիներ, ապա արտադրողների կողմից նման ցուցանիշներով ապրանք չէր արտադրվի և կբավարարվեին միայն առավելագույն թողունակությամբ ըտադրանքով:»:

3. **<u>ԳԲՔԱ-LO-2020/131 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

iii. «Մեգիէլ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից 3-րդ չափաբաժնի համար ներկայացվել է համարժեք ապրանք, ինչով պայմանավորված, հանձնաժողովը, որոշել է նիստը կասեցնել և դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

v. Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգենատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և տեղեկացնել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 21.12.2020թ.-ին ժամը 12:00-ն շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, 21.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից ներկայացրած տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով նաև այլ մոդելի ապրանքներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

viii. Պատվիրատուի ղեկավարի՝ տնօրեն Մ. Ադամյանի, կողմից 22.12.2020թ.-ին կազմված թիվ 1156/1 հրամանով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում կատարվում է փոփոխություն, որի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահ է ընդգրկվում պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանը:

ix. 24.12.2020թ.-ի, նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, նախագահությամբ՝ Ա. Օհանջանյանի, հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

4. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մասնակի բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերությամբ նախատեսված մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, որտեղ պատվիրատուի ղեկավարը կարող է լինել աշխատակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, որտեղ պատվիրատուի ղեկավարը կարող է լինել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից լիազորված պաշտոնատար անձը:

Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը սահմանում է՝

ա. գնումները համակարգող,

բ. պատասխանատու ստորաբաժանում,

գ. գնահատող հանձնաժողով:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը: Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

Նույն կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ: Գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ պատվիրատուի ղեկավարի հրամանով սահմանվում է գնահատող հանձնաժողով, պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող, ով իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները (Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետ): Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը՝ հանձնաժողովի կազմավորման մասին ակտը, որով սահմանվում է գնահատող հանձնաժողովի կազմը՝ բաղկացած առնվազն երեք անդամից, նախագահից ու քարտուղարից: Գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը, իսկ հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ: Նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են յուրաքանչյուր նիստի արդյունքում ընդունված որոշումը (արձանագրությունը), որն էլ համարվում է գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մաս:

Ընդ որում, հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Իսկ այն դեպքերում, երբ պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա ապրանքատեսակի՝ Ընթացակարգի Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության հարցի պարզման համար Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգենատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և տեղեկացնել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, 21.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից ներկայացրած տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով նաև այլ մոդելի ապրանքներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

24.12.2020թ.-ի, նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, նախագահությամբ՝ Ա. Օհանջանյանի, հիմք ընդունելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները, մինչև պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանի հանձնաժողովի կազմում ընդգրկվելը, մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն չեն ունեցել, ինչի մասին վկայում է Հանձնաժողովի՝ 11.12.2020թ.-ի նիստի թիվ 2 ու 17.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունները և Պատվիրատուի ղեկավարի կողմից 22.12.2020թ.-ին կազմված թիվ 1156/1 հրամանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Կարգի 15-րդ կետի իմաստով Հանձնաժողովն ինքն է պարտավոր գնման առարկային համապատասխան գնահատել մասնակիցների որակավորումը և առաջարկները: Իսկ հարկ եղած դեպքում,

եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, մինչև «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում Ա. Օհանջանյանի ընդգրկվելը, Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն, Ընկերության ներկայացված հայտի գնահատման մասով, եղել են ոչ իրավաչափ: Այլ կերպ ասած՝ եթե առկա է Կարգի 15-րդ կետի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Բողոքներ քննող անձը, անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելուն պարտավորեցնելու պահանջին, փաստում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի

բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովի անդամների՝ մասնակիցների հայտերը գնահատելու անկարողության հանգամանքը չի կարող հանգեցնել «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելուն պարտավորեցնելու պահանջի բավարարմանը, հատկապես այն պարագայում, երբ, ինչպես վերը բերված հիմնավորումներով հաստատվում է, որ, Հանձնաժողովը՝ նախագահությամբ Ն. Մելիքյանի, չի ունեցել մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, իսկ տվյալ դեպքում, նոր կազմով ձևավորված հանձնաժողովը՝ նախագահությամբ Ա. Օհանջանյանի, պետք է կրկին գնահատի մասնակիցների ներկայացրած հայտերը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքով ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելուն պարտավորեցնելու պահանջի բավարարմանը:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված մյուս պահանջներին, ապա Բողոքներ քննող անձը դրանք համարում է հիմնավոր՝ սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների հիման վրա, և այն փաստի հաշվառմամբ, որ Հանձնաժողովը դեռ պետք է գնահատի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի Հրավերի պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթի գնահատող դադարեցնել թիվ 5 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացված որոշումները:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**